Արեն Նազարյան
էլ. Փոստ՝ [redacted]
Հեռ.՝ [redacted]

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերության տնօրեն Արմեն Քոլոյանին
հեռ.՝ +374 10 570970
էլ. փոստ՝ info@armradio.am

Տեղեկատվության հարցում «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան» հետազոտության շրջանակում:

Հարգելի պարոն Քոլոյան,

Ես Արեն Նազարյանն եմ, Ձեզ գրում եմ «Հետքի» և «Մեդիայի գլոբալ ռեգիստր» (Global Media Registry) կազմակերպության անունից՝ Հայաստանի մեդիայի ոլորտում թափանցիկության ապահովմանը միտված հետազոտությանն աջակցելու խնդրանքով:

Մենք իրականացնում ենք «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան (Media Ownership Monitoring - MOM Armenia) ծրագիրը՝ Կովկասի տարածաշրջանում մեդիայի սեփականության և բազմակարծության առաջին համապարփակ ուսումնասիրությունը: Հայաստանի հանրային ռադիոն ընդգրկվել է Հայաստանի առաջատար 40 ազդեցիկ լրատվամիջոցների ցանկում՝ հիմնված լսարանի մեծության և տեղեկատվական բովանդակության վրա: Այդ պատճառով էլ գրում ենք Ձեզ:

Մեդիայի սեփականության մոնիտորինգը միջազգային հետազոտական նախաձեռնություն է, որը փաստագրում է մեդիայի սեփականության կառուցվածքը՝ գնահատելու բազմակարծությունն ու մեդիայի կենտրոնացումը: 2015 թվականին սկզբնապես մշակված լինելով «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից, ծրագիրն այժմ իրականացնում է Global Media Registry գերմանական ոչ առևտրային հասարակական կազմակերպությունը: MOM-ը իրականացվել է ավելի քան 30 երկրներում, ներառյալ՝ Մոլդովան, Գերմանիան, Իռլանդիան, Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան, Շրի Լանկան և Բրազիլիան: «MOM Հայաստան» հետազոտությունը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Արտաքին գործերի նախարարության «Քաղաքացիական հասարակության համագործակցություն» ծրագրի կողմից: Նախագիծը կավարտվի 2025 թվականի հոկտեմբերին, և հավաքված տեղեկատվությունը հասանելի կլինի անգլերեն և հայերեն, գլոբալ հարթակում՝ www.mediaownershipmonitor.org հասցեում:

Մեդիայի սեփականության թափանցիկությունը կարևոր է բազմակարծության ապահովման և կարծիքների բազմազանության պաշտպանության համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան օրենսդրություն գոյություն չունի կամ գոյություն ունի, բայց պատշաճ կերպով չի գործում, մեդիայի սեփականատերերը պետք է պրոակտիվ կերպով ներկայանան այն լսարանին, որին ծառայում են: Այս ուսումնասիրությունը կբարձրացնի մեդիայի թափանցիկության աստիճանը լայն

հանրության համար և կտեղեկացնի Հայաստանում մեդիայի սեփականության ներկա վիճակի մասին:

«MOM -Հայաստան» հետազոտության շրջանակում կվերլուծվի տպագիր, առցանց, ռադիո և հեռուստատեսության 40 ամենաազդեցիկ լրատվամիջոցների սեփականության կառուցվածքը: Մեր հետազոտության արդյունքները կներկայացնենք 2025 թվականի հոկտեմբերի վերջին Երևանում կայանալիք կոնֆերանսի ժամանակ:

Որպես Հայաստանի հանրային ռադիոյի ներկայացուցիչ, կարծում ենք, որ Դուք կարող եք զգալիորեն նպաստել մեր նախագծին մասնագիտական փորձագիտությամբ և տեղեկատվությամբ: Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերության տնօրեն Արմեն Քոլոյանի կենսագրականը և գործունեության մասին տվյալներ:
2. Հայաստանի հանրային ռադիոյի գլխավոր խմբագրի կենսագրականը և գործունեության մասին տվյալներ:
3. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերության աշխատակիցների թիվը՝ նամակին պատասխանելու օրվա դրությամբ:

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու 2025 թվականի հոկտեմբերին կայանալիք կոնֆերանսին՝ քննարկելու արդյունքները տարբեր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ հրատարակիչներ, հեռարձակողներ, լրագրողներ, կարգավորող մարմինների ներկայացուցիչներ և քաղաքականություն մշակողներ: Կոնկրետ օրվա մասին կտեղեկացնենք լրացուցիչ:

Թեև մեր ուսումնասիրության մեջ հիմնականում օգտագործվում են հրապարակայնորեն հասանելի տվյալներ, մենք նախապատվություն ենք տալիս առաջնային աղբյուրներին՝ ճշգրտության համար: Մենք կարծում ենք, որ այս տեղեկատվության տրամադրումը ոչ միայն հանրային պարտավորություն է, այլև բխում է լրատվամիջոցների շահերից:

Այս նամակագրությունը և Ձեր պատասխանը, կամ պատասխանի բացակայությունը, կփաստագրվի և կցուցակագրվի մեր աշխատանքի թափանցիկության բաժնում: Ինչպես նշվեց, մեդիայի սեփականության ամբողջական մոնիտորինգը կհրապարակվի առցանց և կթարմացվի շարունակաբար:

Մենք սպասում ենք Ձեր պատասխանին մինչև 2025 թվականի օգոստոսի 15-ը և պատրաստ ենք պատասխանել ցանկացած հարցի:

Շնորհակալություն Հայաստանի մեդիայի թափանցիկությանը միտված ջանքերում ձեր ներդրման համար:

Հարգանքով,

Արեն Նազարյան

«Մեդիայի սեփականության մոնիտորինգ Հայաստան» ծրագրի թիմ՝ «Հետք» և Global Media Registry: